## Երևանի սիմֆոնիկ նվագախումբ

1990-ին Լորիս Ճգնավորյանի նախաձեռնությամբ և Երևանի քաղաքապետարանի հովանավորությամբ հիմնվեց Երևանի երիտասարդական սիմֆոնիկ նվագախումբը: Այս կոլեկտիվը, որը հետագայում վերանվանվեց Երևանի սիմֆոնիկ նվագախմբի, բացի ընթացիկ համերգներից և հոգևոր երաժշտության ժամերից, մասնակցել է ՀՖՆ-ի կազմակերպած փառատոներին, հյուրախաղերով հաջողությամբ հանդես է եկել Մարսելում՝ Միքայել Ավետիսյանի ղեկավարությամբ:
Համերգները ղեկավարում են ինչպես անվանի, այնպես էլ սկսնակ դիրիժորներ՝ Լ.Ճգնավորյանը, Է.Խաչատրյանը, Զ.Վարդանյանը, Գ.Մուրադյանը, Մ.Սիմոնյանը, Վ.Խաչատրյանը, Ռ.Ասատրյանը, Դ.Հարությունյանը, Կ.Դուրգարյանը, Վ.Մինասյանը և ուրիշներ: Իբրև մենակատարներ հանդես են գալիս հանրապետության երիտասարդ կարող ուժեր, այդ թվում՝ ուսումնական հաստատությունների սաները:
Նվագախմբի գեղարվեստական խորհուրդն անց է կացնում երիտասարդ կոմպոզիտորների, դիրիժորների և կատարողների մրցույթներ:
ԵՍՆ-ի գեղարվեստական ղեկավարը և գլխավոր դիրիժորն է Լորիս Ճգնավորյանը:
2000 թվականից ԵՍՆ-ի պատասխանատու դիրիժոր է նշանակվել Կարեն Դուրգարյանը:

## Yerevan Symphony Orchestra

In 1990, on Maestro Loris Tjeknavorian's initiative and under the auspices of the Municipal Council of the City of Yerevan, Yerevan Symphony Orchestra of Young Musicians was founded. This orchestra, which was later transformed into Yerevan Symphony Orchestra, hasn't only perform in its regular concerts and Sacred Music Hour series, but has also participated in festivals organized by the APO, successfuly performed in Marselles under the baton of Michael Avetissian.
The orchestra has been conducted by well-known and beginner artists alike, such as L.Tjeknavorian, E.Khachaturian, Z.Vardanian, G.Mouradian, M.Simonian, V.Khachaturian, R.Asatrian, D.Harutunian, K.Durgarian, V.Minassian and many others.
Young talented musicians, best students of the Yerevan schools of music perform with this orchestra.
The Artistic Council of the orchestra organizes competitions of young composers, conductors and soloists.
Maestro Loris Tjeknavorian is the Artistic Director and Principal Conductor of the YSO.
Mr.Karen Durgarian has been Resident Conductor of the YSO starting the year 2000.

## Ռուբեն Ասատրյան
(դիրիժոր)

Ծնվել է 1959-ին: 1986-ին ավարտել է Երևանի կոնսերվատորիան իբրև ջութակահար (պրոֆ.Զոյա Պետրոսյանի դասարան), իսկ 1991-ին՝ իբրև դիրիժոր (պրոֆ. Յուրի Դավթյանի դասարան): 1994-ին վերակազմավորել է ՀՖՆ-ի մենակատարների անսամբլը՝ պարբերաբար կազմակերպելով համերգներ դասական, ժամանակակից և հատկապես հայ կոմպոզիտորների գործերի ընդգրկմամբ:
Թողարկվել են լազերային ձայնասկավառակներ՝ Ռ.Ասատրյանի ձայնագրությամբ (Ավետ Տերտերյանի, Լորիս Ճգնավորյանի, Արթուր Եղիկյանի, Սուրեն Զաքարյանի գործերից): Ղեկավարել է ՀՖՆ-ի և ԵՍՆ-ի համերգները:
2000 թվականից նշանակվել է ՀՖՆ-ի դիրիժոր:

## Ռուբեն Կոսեմյան
(ջութակ)

Ծնվել է 1973-ին Երևանում: 1997-ին ավարտել է Երևանի կոնսերվատորիան, իսկ 1999-ին՝ ասպիրանտուրան (պրոֆ. Է.Թադևոսյանի դասարան): Երևանի կոնսերվատորիայի դասախոս է: Հանդես է եկել մենահամերգներով, տարբեր անսամբլների կազմում և սիմֆոնիկ նվագախմբի ընկերակցությամբ:Նվագախմբի հետ կատարել է Մոցարտի (թիվ 4, թիվ 5), Մենդելսոնի, Խաչատրյանի, Ղ.Սարյանի կոնցերտները: Մրցանակներ է շահել հանրապետական «Նոր անուններ», «Ամադեուս», կամերային անսամբլների մրցույթներում: Արամ Խաչատրյանի անվան հանրապետական մրցույթի 2-րդ մրցանակակիրն է:

## Սերգեյ Կոսեմյան
(թավջութակ)

Ծնվել է 1976-ին Երևանում: 1999-ին ավարտել է Երևանի կոնսերվատորիան, որի ասպիրանտն է ներկայումս (խորհրդատու՝ պրոֆ.Ա.Շամշյան): Հանդես է եկել մենահամերգներով: Նվագախմբի հետ կատարել է Հայդնի (ռե մաժոր), Բոկերինիի, Դվորժակի կոնցերտները, Խաչատրյանի Կոնցերտ-ռապսոդիան:

## Rouben Asatrian
(conductor)

Rouben Asatrian was born in 1959. He graduated from Yerevan Conservatory in 1986 as a violinist with Prof. Zoya Petrossian and in 1991 as a conductor with Prof. Yuri Davtian.
In 1994 he reorganized the Ensemble of soloists of the APO and held regular concerts of classical and contemporary music, which included pieces by Armenian composers.
He released several CDs with compositions of Avet Terterian, Loris Tjeknavorian, Arthur Yeghikian and Souren Zakarian.
He has also conducted the Yerevan Symphony Orchestra.
In 2000 he has been appointed conductor for the APO.

## Rouben Kosemian
(violin)

Rouben Kosemian was born in Yerevan in 1973. In 1997 he graduated from the Yerevan Conservatory and in 1999 he completed his post-graduate studies under the tutelage of Professor E.Tadevosian.
Currently, he is an Assistant Professor at Komitas Conservatory. Mr.Kosemian has performed many recitals, has been a member of different ensembles and played with various orchestras. As a soloist he has performed Violin Concertos by Mozart (No.4, 5), Mendelssohn, Khachaturian and Gh.Sarian.
He won prizes at "New Names" and "Amadeus" republic competitions and competitions of Chamber Music as well. He is the 2nd prize-winner of Aram Khachaturian Republic competition.

## Sergei Kosemian
(cello)

Sergei Kosemian was born in Yerevan in 1976. He graduated from the Yerevan Conservatory in 1999 and is currently doing his post-graduate studies at the same conservatory with Professor A.Shamshian.
Mr. Kosemian has given several recitals.
He has also performed Haydn's, Boccherini's, Dvorak's Concertos with Orchestra, as well as Khachaturian's Concert-Rhapsody.

9 ապրիլի
Ծրագիր

**Լյուդվիգ վան Բեթհովեն**
(1770-1827)
«Էգմոնտ» նախերգանք

**Յոհաննես Բրամս**
(1833-1897)
Կրկնակի կոնցերտ ջութակի, թավջութակի և նվագախմբի համար
*1.Allegro 2.Andante 3.Vivace non troppo*
Մենակատարներ՝
**Ռուբեն Կոսեմյան** (*ջութակ*)
**Սերգեյ Կոսեմյան** (*թավջութակ*)

**Ավետ Տերտերյան**
(1929 - 1994)
Սիմֆոնիա թիվ 3
(*եռամաս*)
Զուռնայի և դուդուկի նվագաբաժինները կատարում են
Արա Բախտիկյանը և Վազգեն Մակարյանը

Դիրիժոր՝ Ռուբեն Ասատրյան

April 9

**Ludwig van Beethoven**
(1770-1827)
"Egmont" Overture

**Johannes Brahms**
(1833-1897)
"Double" Concert for Violin & Cello
*1.Allegro 2.Andante 3.Vivace non troppo*
Soloists: **Rouben Kosemian** (violin)
**Sergei Kosemian** (cello)

**Avet Terterian**
(1929 - 1994)
Symphony # 3
*(in three movements)*
Parts for doudouk and zourna are performed by
**Ara Bakhtikian** and **Vazgen Makarian**

Conductor: **Rouben Asatrian**

1999/2000 թթ. համերգաշրջանի հովանավոր՝
1999/2000 Concert Season is sponsored by

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

ԵՍՆ-ի հերթական համերգը
23 ապրիլի

Մենակատար՝
Շուշան Սիրանոսյան
(*Ֆրանսիա*)

Դիրիժոր՝
Հիսայոշի Ինույե
(*Ճապոնիա*)

Ծրագիրը կհայտարարվի լրացուցիչ

The upcoming concert of YSO
April 23

Soloist
**Shoushan Siranossian**
*(France)*

Conductor
**Hisayoshi Inoue**
*(Japan)*

The concert program will be announced later

*Արամ Խաչատրյան* համերգասրահ
1999/2000 թթ. համերգաշրջան

## Երևանի սիմֆոնիկ նվագախումբ

Գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝
Լորիս Ճգնավորյան
Պատասխանատու դիրիժոր՝
Կարեն Դուրգարյան

9 ապրիլի

Մենակատարներ՝
Ռուբեն Կոսեմյան (*ջութակ*)
Սերգեյ Կոսեմյան (*թավջութակ*)

Դիրիժոր՝
Ռուբեն Ասատրյան

***Aram Khachaturian*** **Concert Hall**
1999/2000 Concert Season

## Yerevan Symphony Orchestra

Artistic Director & Principal Conductor
**Loris Tjeknavorian**
Resident Conductor
**Karen Durgarian**

**April 9**

**Soloists**
**Rouben Kosemian** (*violin*)
**Sergei Kosemian** (*cello*)

Conductor
**Rouben Asatrian**